Բարի լուրէր



Վեցերորդ ամսին Գաբրիէլ հրեշտակը Աստծու կողմից ուղարկուեց Գալիլիայի մի քաղաքը, որի անունը Նազարէթ էր, մի կոյսի մօտ, որ նշանուած էր Յովսէփ անունով մի մարդու հետ՝ Դաւթի տնից: Եւ այդ կոյսի անունը Մարիամ էր: Եւ հրեշտակը, գալով նրա մօտ, ասաց. «Ուրախացի՛ ր, ո՛ վ շնորհընկալ, Տէրը քեզ հետ է»: Իսկ նա այս խօսքերի վրայ խռովուեց և մտքում խորհում էր, թէ ինչ բան էր այս ողջոյնը: Եւ հրեշտակը նրան ասաց. «Մի՛ վախեցիր, Մարիա՛ մ, որովհետև Աստծուց դու շնորհ գտար: Եւ ահա՛ դու կը յղիանաս և կը ծնես մի որդի ու նրա անունը Յիսուս կը դնես: Նա մեծ կը լինի և Բարձրեալի որդի կը կոչուի: Եւ Տէր Աստուած նրան կը տայ նրա հօր՝ Դաւթի աթոռը, և նա յաւիտեան կը թագաւորի Յակոբի տան վրայ, ու նրա թագաւորութիւնը վախճան չի ունենայ» Եւ Մարիամն ասաց. «Ահաւասի՛ կ ես մնում եմ Տիրոջ աղախինը, թող քո խօսքի համաձայն լինի ինձ»: Եւ հրեշտակը հեռացաւ նրանից: Ղուկաս 1:26-33 & 38

Յովսէփն էլ Դաւթի տնից և ազգատոհմից լինելով՝ Գալիլիայի Նազարէթ քաղաքից ելաւ գնաց դէպի Հրէաստան՝ Դաւթի քաղաքը, որը Բեթղեհէմ է կոչւում, մարդահամարի մէջ արձանագրուելու Մարիամի հետ, որ նրա հետ նշանուած էր և յղի էր: Եւ երբ նրանք այնտեղ հասան, նրա ծննդաբերելու օրերը լրացան, և նա ծնեց իր անդրանիկ որդուն, խանձարուրի մէջ փաթաթեց նրան ու դրեց մսուրի մէջ, որովհետև իջևանում նրանց համար տեղ չկար: Ղուկաս 2:4-7



Եւ այդ շրջանում բացօթեայ
բնակուող հովիւներ կային,
որոնք իրենց հօտերի գիշերային
պահպանութիւնն էին անում:
Եւ Տիրոջ հրեշտակը երևաց նրանց, Տիրոջ փառքը ծագեց նրանց
շուրջը, ու նրանք սաստիկ վախեցան: Եւ հրեշտակը ասաց նրանց.
«Մի՛ վախեցէք, որովհետև ահա ձեզ մեծ ուրախութիւն եմ աւետում,
որը ամբողջ ժողովրդինը կը լինի. որովհետև այսօր Դաւթի քաղաքում
ձեզ համար ծնուեց մի Փրկիչ, որ օծեալ Տէրն է: Եւ սա՛ ձեզ համար
նշան կը լինի. խանձարուրով փաթաթած և մսուրի մէջ դրուած մի
մանուկ կը գտնէք»: Եւ յանկարծակի այդ հրեշտակի հետ երևաց
երկնային զօրքերի մի բազմութիւն, որ օրհնում էր Աստծուն ու ասում.
«Փա՜ռք Աստծուն՝ բարձունքներում, և երկրի վրայ խաղաղութի՜ւն և
հաճութի՜ւն՝ մարդկանց մէջ»: Ղուկաս 2:8-14

Եւ մանուկը աճում ու զօրանում էր՝ լի իմաստութեամբ. և Աստծու շնորհները նրա վրայ էին:

Ղուկաս 2:40

Յովհաննէսը մկրտում էր անապատում և քարոզում ապաշխարութեան մկրտութիւն՝ մեղքերի թողութեան համար: Ամբողջ Հրէաստանը և բոլոր երուսաղէմացիները գնում էին նրա մօտ և մկրտւում նրանից Յորդանան գետում՝ խոստովանելով իրենց մեղքերը: Եւ Յովհաննէսը հագել էր ուղտի մազից զգեստ և մէջքին՝ կաշուէ գօտի. և նրա կերակուրն էր մորեխ և վայրի մեղր: Նա քարոզում էր և ասում. «Իմ յետևից կը գայ ինձնից աւելի հզօրը, որի առաջ արժանի չեմ խոնարհուելու՝ նրա կօշիկների կապերն արձակելու համար: Ես ձեզ մկրտեցի ջրով, իսկ նա ձեզ կը մկրտի Սուրբ Հոգով»: Այն օրերին Յիսուս եկաւ Գալիլիայի Նազարէթ քաղաքից և Յովհաննէսից մկրտուեց Յորդանանում: Եւ նոյն ժամին, երբ ջրից դուրս էր գալիս, տեսաւ երկինքը՝ պատռուած, և Աստծու Հոգին, որպէս աղաւնի, որ իջնում էր իր վրայ: Երկնքից մի ձայն եկաւ, որն ասում էր. «Դո՛ւ ես իմ սիրելի Որդին, որ ունես իմ ամբողջ բարեհաճութիւնը»: ՄԱՐԿՈՍԻ 1:4-11



Յիսուս լեռը բարձրացաւ և իր մօտ կանչեց նրանց, որոնց ինքը կամեցաւ. և նրանք գնացին նրա մօտ: Նա նշանակեց Տասներկուսին, որ իր շուրջը լինեն, և նրանց քարոզելու ուղարկի, ու նրանք իշխանութիւն ունենան ցաւեր բուժելու և դևեր հանելու: ՄԱՐԿՈՍԻ 3:13-15

Եւ փարիսեցիների մէջ Նիկոդեմոս անունով մի մարդ կար, որ հրեաների իշխանաւոր էր: Սա գիշերով եկաւ նրա մօտ ու նրան ասաց. «Ռաբբի՛, գիտենք, որ Աստծուց ես եկել որպէս վարդապետ, որովհետև ոչ ոք չի կարող կատարել այն նշանները, որ դու ես անում, եթէ Աստուած նրա հետ չլինի»: Յիսուս պատասխանեց և ասաց նրան. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթէ մէկը վերստին չծնուի, չի կարող Աստծու արքայութիւնը տեսնել»: Նիկոդեմոսը նրան ասաց. «Ինչպէ՞ս կարող է ծնուել մի մարդ, որ ծեր է. միթէ կարելի՞ է իր մօր որովայնը կրկին անգամ մտնել ու ծնուել»: Յիսուս պատասխան տուեց և ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթէ մէկը ջրից ու Հոգուց չծնուի, չի կարող Աստծու արքայութիւնը մտնել. որովհետև մարմնից ծնուածը մարմին է, իսկ Հոգուց ծնուածը՝ հոգի:

ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 3:1-6



Հետևեալ օրը Յիսուս գնում էր մի քաղաք, որ Նային էր կոչւում. նրա հետ էին գնում նաև իր աշակերտները և բազում ժողովուրդ: Երբ քաղաքի դարպասին մօտեցաւ, ահա դուրս էր բերւում մի մեռել, միակ որդին իր մօր, որ մի այրի կին էր. և քաղաքից բազում ժողովուրդ նրա հետ էր: Երբ Տէրը կնոջը տեսաւ, խղճաց նրան և ասաց. «Մի՛ լար»: Մօտենալով դագաղին դիպաւ: Դագաղը տանողները կանգ առան: Եւ նա ասաց. «Քե՛զ եմ ասում, ո՛վ պատանի, վե՛ր կաց»: Մեռելը վեր կացաւ, նստեց և սկսեց խօսել: Եւ Յիսուս նրան մօրը տուեց: Եւ ահը պատեց բոլորին. փառաւորում էին Աստծուն և ասում. «Մի մեծ մարգարէ է յայտնուել մեր մէջ», և՝ «Աստուած այցելութիւն է տուել իր ժողովրդին բարութեամբ»: Ղուկաս 7:11-16

Յիսուս իր աչքերը վեր բարձրացրեց և տեսաւ, որ բազում ժողովուրդ է գալիս իր մօտ: Փիլիպպոսին ասաց. «Որտեղի՞ց հաց պիտի գնենք, որ դրանք ուտեն»: Այս ասում էր՝ նրան փորձելու համար, բայց ինքը գիտէր, թէ ինչ էր անելու: Փիլիպպոսը նրան պատասխանեց. «Երկու հարիւր դահեկանի հաց դրանց չի բաւարարի, թէկուզ և իւրաքանչիւր ոք մի կտոր վերցնի»: Նրա աշակերտներից մէկը՝ Անդրէասը, Սիմոն Պետրոսի եղբայրը, ասաց նրան. «Այստեղ մի պատանի կայ, որ հինգ գարեհաց ունի և երկու ձուկ. բայց այդքանն ի՞նչ է այսչափ մարդկանց համար»: Յիսուս ասաց. «Նստեցրէ՛ք մարդկանց»: Այնտեղ առատ խոտ կար: Եւ շուրջ հինգ հազար մարդիկ նստեցին: Եւ Յիսուս հացն առաւ ու գոհութիւն յայտնեց Աստծուն և բաշխեց նստածներին: Նոյն ձևով և ձկներից՝ որչափ որ կամեցան: Եւ երբ կշտացան, աշակերտներին ասաց. «Հաւաքեցէ՛ք այդ մնացած կտորները, որպէսզի ոչ մի բան չկորչի»: Հաւաքեցին և լցրին տասներկու սակառ այն հինգ գարեհացի կտորտանքով, որ ավելացել էր ուտողներից: Իսկ մարդիկ, երբ տեսան այն նշանները, որ նա արեց, ասացին. «Սա՛ է ճշմարիտ մարգարէն, որ աշխարհ էր գալու»: ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 6:5-14

Եւ երբ երեկոյ եղաւ, նրա աշակերտները ծովեզերք իջան: Եւ նաւակ նստելով գալիս էին դէպի ծովի միւս կողմը, դէպի Կափառնայում: Եւ երբ մութն ընկաւ, Յիսուս դեռ իրենց մօտ չէր եկել. և ծովը հողմի ուժգին փչելուց փոթորկւում էր: Երբ շուրջ հինգ կամ վեց կիլոմետր թիավարելուց յետոյ տեսան Յիսուսին, որ քայլում էր ծովի վրայով և նաւակին մօտեցել էր, սաստիկ վախեցան: Եւ նա ասաց նրանց. «Ես եմ, մի՛ վախեցէք»: Եւ ուզում էին նրան նաւակի մէջ առնել. և նաւակը շուտով հասաւ այն տեղը, ուր գնում էին:

ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 6:16-21

Եւ նրան մանուկներ էին բերում, որպէսզի ձեռքը դնի նրանց վրայ: Իսկ աշակերտները յանդիմանում էին նրանց, ովքեր բերում էին: Երբ Յիսուս այս տեսաւ, բարկանալով սաստեց նրանց և ասաց.«Թո՛յլ տուէք այդ մանուկներին գալ ինձ մօտ և արգելք մի՛ եղէք նրանց, որովհետև Աստծու արքայութիւնը այդպիսիներինն է: Ճշմարիտ եմ ասում ձեզ, ով Աստծու արքայութիւնը չընդունի որպէս մանուկ, նրա մէջ չի մտնելու»: Եւ նա վերցնելով նրանց իր գիրկը՝ նրանց վրայ ձեռքը դրեց և օրհնեց նրանց: ՄԱՐԿՈՍԻ 10:13-16



Ես եմ լաւ հովիւը. լաւ հովիւը իր կեանքն է տալիս ոչխարների համար: իմ ոչխարներն իմ ձայնը լսում են, և ես ճանաչում եմ նրանց. և նրանք գալու են իմ յետևից. և ես նրանց կը տամ յաւիտենական կեանք. և նրանք չեն կորչի յաւիտեան. և ոչ ոք նրանց իմ ձեռքից չի յափշտակի: ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 10:11 & 27-28



Քահանայապետներն ու փարիսեցիները ատեան գումարեցին և ասացին. «Ի՞նչ անենք, քանի որ այդ մարդը բազում նշաններ է անում: Եթէ նրան այնպէս թողնենք, ամէնքը կը հաւատան նրան, և հռոմէացիները կը գան ու կը վերացնեն մեր ազգն ու մեր սրբավայրը»: Նրանցից մէկը՝ Կայիափա անունով, որ այդ տարուայ քահանայապետն էր, նրանց ասաց. «Դուք ոչինչ չգիտէք, ոչ իսկ խորհել էք, թէ մեզ համար աւելի լաւ է, որ մէկ մարդ մեռնի ժողովրդի համար, քան թէ ամբողջ ազգը կորչի»: Այս բանը նա ինքն իրենից չասաց, այլ, քանի որ այդ տարուայ քահանայապետն էր, մարգարէացաւ, որ Յիսուս մեռնելու էր ազգի համար: Եւ ոչ միայն ազգի համար, այլ՝ որպէսզի նաև Աստծու ցրուած որդիներին ի մի հաւաքի: Ապա այն օրուանից խորհուրդ արեցին, որ նրան սպանեն: ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 11:47-53

Եւ երբ երեկոյ եղաւ, տասներկու աշակերտների հետ սեղան էր նստել: Եւ մինչ նրանք դեռ ուտում էին, նա ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզանից մէկն ինձ մատնելու է»: Եւ նրանք խիստ տխրեցին. նրանցից իւրաքանչիւրն սկսեց ասել նրան. «Միթէ ե՞ս եմ, Տէ՛ր»: Նա պատասխան տուեց ու ասաց. «Ով իր ձեռքն ինձ հետ պնակի մէջ մտցրեց, նա՛ է ինձ մատնելու:

ՄԱՏԹԷՈՍԻ 26:20-23



Ուրիշ երկու չարագործներ էլ բերեցին՝ նրա հետ սպանելու համար: Երբ հասան Գագաթ կոչուած տեղը, այնտեղ նրան խաչը հանեցին. և չարագործներին էլ՝ մէկին աջ կողմը, միւսին ձախ կողմը՝ խաչեցին: Իսկ կախուած չարագործներից մէկը հայհոյում էր նրան և ասում. «Դու չե՞ս Քրիստոսը. փրկի՛ր ինքդ քեզ և մեզ»: Նրա ընկերը նրան սաստելով՝ պատասխան տուեց և ասաց. «Աստծուց չե՞ս վախենում, դու, որ նոյն պատիժն ես կրում: Եւ մենք իրաւացիօրէն արժանի հատուցումն ենք ստանում այն գործերի համար, որ կատարեցինք, իսկ սա որևէ վատ բան չի արել»: Եւ ասաց Յիսուսին. «Յիշի՛ր ինձ, Տէ՛ր, երբ գաս քո թագաւորութեամբ»: Եւ Յիսուս նրան ասաց. «Ճշմարիտ եմ ասում քեզ, այսօր ինձ հետ դրախտում կը լինես»: Ղուկաս 23:32-33 & 39-43



Եւ համարեա կէսօր էր. և խաւար եղաւ ամբողջ երկրի վրայ մինչև ժամը երեքը. արեգակը խաւարեց: Եւ տաճարի վարագոյրը մէջտեղից պատռուեց: Եւ Յիսուս բարձրաձայն աղաղակեց և ասաց. «Հա՛յր, քո ձեռքն եմ աւանդում իմ հոգին»: Երբ այս ասաց, հոգին աւանդեց: Եւ հարիւրապետը, տեսնելով ինչ որ պատահեց, փառաւորեց Աստծուն և ասաց. «Իսկապէս այս մարդը արդար էր»:

Ղուկաս 23:44-47





Երբ երեկոյ եղաւ, եկաւ Յովսէփ անունով արիմաթիացի մի մեծահարուստ մարդ, որ Յիսուսին աշակերտել էր:
Սա Պիղատոսի մօտ գնալով Յիսուսի մարմինը խնդրեց:
Այն ժամանակ Պիղատոսը հրամայեց, որ մարմինը տրուի:
Եւ Յովսէփը, մարմինն առնելով, պատեց մաքուր կտաւով
և դրեց նոր գերեզմանի մէջ, որ փորել էր տուել ժայռի մէջ:
Եւ մի մեծ քար, որպէս կափարիչ, գերեզմանի դռան առաջ գլորեց ու գնաց: Այնտեղ էր Մարիամ Մագդաղենացին և միւս Մարիամը. նրանք նստած էին գերեզմանի դիմաց:

ՄԱՏԹԷՈՍԻ 27:57-61



Բայց կիրակի օրը, առաւօտեան շատ վաղ, կանայք գերեզման եկան՝ բերելով իրենց պատրաստած խնկերը. նրանց հետ և ուրիշ կանայք: Եւ քարը գերեզմանից գլորած գտան ու ներս մտնելով՝ Տէր Յիսուսի մարմինը չգտան: Եւ մինչ նրանք զարմացած էին այդ բանի վրայ, ահա լուսաւոր զգեստներով երկու մարդիկ հասան նրանց մօտ: Եւ երբ կանայք զարհուրեցին ու իրենց երեսը գետին խոնարհեցրին, մարդիկ ասացին. «Ինչո՞ւ ողջին մեռելների մէջ էք փնտռում: Այստեղ չէ, այլ՝ յարեաւ: Յիշեցէ՛ք՝ ինչպէս խօսեց նա ձեզ հետ, երբ Գալիլիայում էր. ասում էր, թէ պէտք է, որ մարդու Որդին մեղաւոր մարդկանց ձեռքը մատնուի, խաչուի և երրորդ օրը յարութիւն առնի»: Եւ նրանք յիշեցին նրա խօսքերը:

Ղուկաս 24:1-8



Ապա անմիջապէս վեր կացան ու Երուսաղէմ վերադարձան և հաւաքուած գտան Տասնմէկին և նրանց հետ եղածներին, որոնք ասում էին, թէ՝ «Իսկապէս յարեաւ Տէրը և երևաց Սիմոնին»: Իսկ երկուսը պատմեցին այն, ինչ պատահել էր ճանապարհին, և թէ ինչպէ՛ս Յիսուս իրեն ճանաչել էր տուել նրանց՝ հաց կտրելու ժամանակ: Մինչ դեռևս նրանք այս էին խօսում, Յիսուս ինքը եկաւ կանգնեց նրանց մէջ և ասաց. «Խաղաղութի՛ւն ձեզ, ես եմ, մի՛ վախեցէք»: Իսկ նրանք զարհուրած վախենում և կարծում էին, թէ մի ոգի են տեսնում: Եւ նրանց ասաց. «Ինչո՞ւ էք խռովուած, և ինչո՞ւ ձեր սրտերում կասկածներ են ծագում. տեսէ՛ք իմ ձեռքերն ու ոտքերը, որովհետև նոյն ինքն ես եմ. շօշափեցէ՛ք ինձ և տեսէ՛ք, որովհետև ոգին մարմին և ոսկորներ չունի. ինչպէս տեսնում էք, ես ունեմ»: Եւ այս ասելով՝ ցոյց տուեց նրանց իր ձեռքերն ու ոտքերը:

Ղուկաս 24:33-40



Եւ ասաց նրանց. «Այսպէս պէտք է չարչարուէր Քրիստոս, յարութիւն առնէր մեռելներից երրորդ օրը, և քարոզուէր նրա անունով ապաշխարութիւն և մեղքերի թողութիւն բոլոր ազգերի մէջ՝ Երուսաղէմից սկսած: Եւ այս բաների վկաներ էք դուք: Ապա նրանց տարաւ հանեց մինչև Բեթանիա և, բարձրացնելով իր ձեռքերը, օրհնեց նրանց: Եւ մինչ նա օրհնում էր նրանց, բաժանուեց նրանցից և դէպի երկինք էր վերանում:

Ղուկաս 24:46-48 & 50-51

քանի որ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր միածին Որդուն տուեց, որպէսզի, ով նրան հաւատում է, չկորչի, այլ ընդունի յաւիտենական կեանքը. որովհետև Աստուած իր Որդուն չուղարկեց աշխարհ, որ դատապարտի աշխարհը, այլ՝ որպէսզի աշխարհը նրանով փրկուի: Ով նրան հաւատում է, չպիտի դատապարտուի, և ով նրան չի հաւատում, արդէն իսկ դատապարտուած է, քանի որ Աստծու միածին Որդու անունը չհաւատաց: ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 3:16-18

Եթէ ասենք թէ մեղք չ՚ունինք, մեր անձերը խաբում ենք և ճշմարտութիւնը չ՚կայ մեզանում: Ապա թէ մեր մեղքերը խոստովանենք, նա հաւատարիմ է և արդար որ մեր մեղքերը թողէ մեզ, և սրբէ մեզ ամեն անիրաւութիւնից:
1 ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 1:8-9

Յիսուս նրանց ասաց. «Ես եմ Ճանապարհը և Ճշմարտութիւնը և Կեանքը: Ոչ ոք չի գայ Հօր մօտ, եթէ ոչ՝ ինձանով:»
ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 14:6

Եկէ՛ք ինձ մօտ, բոլոր յոգնածներդ ու բեռնաւորուածներդ, և ես ձեզ կը հանգստացնեմ: Իմ լուծը ձեր վրայ վերցրէ՛ք և սովորեցէ՛ք ինձնից, որ հեզ եմ և սրտով խոնարհ. և ձեզ համար հանգիստ պիտի գտնէք, որովհետև իմ լուծը քաղցր է և իմ բեռը՝ թեթև»: ՄԱՏԹԷՈՍԻ 11:28-30

Իր աշակերտների առաջ Յիսուս բազում այլ նշաններ էլ արեց, որոնք այս գրքում գրուած չեն: Այլ այսքանը գրուեց, որ դուք հաւատաք, թէ Յիսուս Քրիստոսն է՝ Աստծու Որդին. նաև՝ որպէսզի հաւատաք ու նրա անունով յաւիտենական կեանքն ընդունէք: ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 20:30-31

Ես եմ Ալֆան և Օմեղան. սկիզբը և վերջը, առաջինը և վերջինը:
Հայտնութիւն 22:13

ΑΩ

Արդյոք այս աղոթքն արտահայտում է ձեր սիրտը:? Եթե դա արվի, աղոթը այս աղոթքը և Քրիստոսը կդառնա ձեր կյանքը, ինչպես Նա խոստացել է.

Տեր Հիսուս, հասկանում եմ, որ ես մեղավոր եմ և կարիքս քեզ իմ կյանքում: Ես շնորհակալություն եմ հայտնում խաչի վրա մահանալու համար, որ վերցնես իմ մեղքերը: Շնորհակալ եմ իմ մէխքրես ներումէս ներողամտության համար և ես տալիս ես հավիտենական կյանք: Ես կեզ հրավիրում եմ իմ կյանքում որպես Փրկիչ և Տեր: Խնդրում եմ վերահսկողը իմ կյանքը.

Անուն_____Ամսաթիվը_____

Բատկերազարդող՝ Linda Riddell

Հայկական *Սուրբ* Գրությունները Հայ *Առաքելական* Եկեղեցի *առցանց* գրադարանից են.

Անգլերենի *Սուրբ* գրությունների մեջբերումներն են «Նոր Քինգ թագավորի» տարբերակը՝ Հրատարակչություն © 1982 թ. Թոմաս Նելսոն, Inc., Հրատարակիչներ.
Օգտագործվում է թույլտվությամբ: Բոլոր իրավունքները պաշտպանված են.

www.goodnewscoloringbook.org

Հայերեն (արևել)
Armenian (Eastern)